



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Մեծ. Քաղաքի Գործարարական.

Թիվ 35

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄՆ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՅԻՑՈՒՆ ԸՀԻՆԳԵՐՐՈՐԳ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳՍԳՐՈՒԹԻՒՆ

ԸՍՏԸ ԱԼԹԸ ՎԵՄԸ ԻԱՆ

1873

### ՔՆՊՃԱՆՍԻՐ ԽՈՒՂԱՍԳ

ԲԱՅՈՒՄ 1870 ՄՄԻՆ

ՆԻՍՑ ԺԵ.

29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ,  
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵՍՆ Գ. ԷՖԷՆՏԻ (Ս. Ստենապետ)

### ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացումն նախորդ ատենադրութեանց:
2. Կոնգակ Վեհափառ Կաթողիկոսի:
3. Կաթողիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք:
4. Ատենական կանոնադրութիւն:
5. Հարցումն ինն Երեւոյսանաց:
6. Առաջարկութիւն տասն և եօթն Երեւոյսանաց Սահմանադրութեան վերաբըն-  
նութիւնը Մանածողովի մը յանձնելու համար:
7. Տեղեկագիր Աղթամարաց խնդրոյն:

Ատենը բացուեցաւ ժամ 8 ին 'ի ներ-  
կայութեան մեծագոյն մասի անդամաց, 54 ե-  
րեսփոխանաց, որոց թիւը 80 ի հասաւ 'ի  
վերջէ:

#### 1. ՎԵՒԵՐԵՑՈՒՄՆ ՆԵՒՈՐԳ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆԾ

Ատենապետ էֆէնտին յայտնելով թէ՛ ժո-  
ղովոյ 39րդ նիստէն սկսեալ մինչև 52րդ նիս-  
տի ատենադրութիւնները տպագրութեամբ ե-  
րեսփոխանաց հաղորդուելէ ետեւ՝ տակաւին  
անվաւեր կը մնան ժողովին կողմէ, եւ թէ  
այսօր ընդունելու թեան պիտի դրուին կարգաւ,

հրաւիրեց ժողովը 39րդ նիստի ատենադրու-  
թիւնէ սկսելով իւր գիտողութիւններն ընելու:

ԻՓԷԿՃԵԱՆ 2. էՖ. Անցեալ անգամ կարե-  
ւոր խնդրոյ մը վրայ ժողովին հանրագիր մը ներ-  
կայացաւ, որ Ազգ. Վարչութեան յանձնաւելով  
պիտի վերապահանար անկէ ընդհ. ժողովի նպէտք  
եղած բացատրութիւններով հանդերձ, եւ սու-  
կայն այն խնդիրն օրուան կարգին մէջ յիշա-  
տակուած չէ և պաշտօնապէս անյայտ է մեզ  
թէ ինչ կէք ունեցաւ այն: Միթէ Գիւանը տե-  
ղեկութիւն մը չունի այս մասին որ մեզ հաղորդէ:  
ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. Չեր խօսքը խնդրէն  
դուրս է:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. Տեղեկութիւն մը միայն կուզեմ ստանալ Գիւանէն :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Առաջ Ընդհ. Ժողովոյ մէջ նախորդ Քաղ. Ժողովոյ անդամներն 'ի մի վայր խմբուած մասնաւոր սեղանի մը առջեւ կը նստէին՝ եւ երբ հարկը պահանջը, զիւրին էր Քաղ. Ժողովոյ հարցում ուղղել, սակայն այս ձեւը չպահօրի հիմայ եւ կերեւի թէ արդի Քաղ. Ժողովոյ ուշադրութենէն վրիպած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Անշուշտ այս ձեւն իւր պատշաճութիւնն ունէր եւ լաւագոյն էր զայն պահել, ուստի եթէ Քաղ. Ժողովոյ անդամներ կան հոս, կը հրաւիրեմ զիրենք որ մասնաւոր տեղ մը նստին, որպէս զի երբ Քաղ. Ժողովոյ հետ խօսիլ հարկ լինի, զխնամք թէ որու կուզեմք մեր խօսքը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Ատենադպիր Քաղ. Առողովոյ) Ազգ. Վարչութեան Արժանաւոր եւ Քաղ. Ժողովոյ զիւանները ահաւասիկ հոս կը գտնուին 'ի միասին, այս երկու ժողովները առանց իրարու գործակցութեան չեն գործեր :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Գանձ հիմայ ատենադրութեանց ինչորոշն : Շատ մը նիստերէ 'ի վերջ ատենադրութիւններն զիգուեր եւ անվաւեր մնացեր են : Արարցնեմ թէ ինչու ատենադրութիւններն ժամանակին չեն հասնիր կամ գէթ չեն բացարձակ մեզ չհասնելուն պատճառներն : Այսպէս շատ մը նիստերու ատենադրութիւններ միահամուռ ժողովին ներկայացուին եւ վաւերացման ենթարկուին անտեղութիւն մ'է : Ընդհ. Ժողովոյ նիստերը տասն եւ հինգ օրն եւ երբեմն ալ արման անգամ մը տեղի կունենան, եւ չեմ կրնար ըմբռնել թէ ինչու ամեն նիստի ատենադրութիւն յաջորդին պատրաստ չը գտնուիր եւ վաւերացման ենթարկուիր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Արդարեւ ատենադրութեանց այսպէս զիգուերը ցուտի է, որու պատասխանատուութիւնը 'իւր սեփական ձեռքով զրայ կը ծանրանայ, կը խոտաովանիմ թէ ես բնաւ զրազած չունիմ եւ ասոր համար ես զինքս ալ կեպեմք, իսկ ուրիշ բացատրութիւն մը եթէ ունի ատենադպիր ԷՖ. կը հրաւիրեմ զինքը որ ժողովին հաղորդէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ի պատասխան Այլա-

տեան ԷՖ. ի կը յայտնեմ որ ատենադրութիւնները նոյն իսկ նախորդ Գիւանին օրէն սկսեր են զիգուեր եւ անվաւեր մնալ եւ այսպէս շարունակուեր է ցարդ : Նախորդ Ատենադպիրները ասոր համար պէտք եղած բացատրութիւններն տուեր են ժամանակին եւ կարծեմ աւելորդ է զանոնք կրկնել, միայն թէ Գիւանը կաշխատի այս վիճակին վերջ տալու, եւ ահա այսօր զիգուեւոր նիստերու ատենադրութիւնները ժողովոյ վաւերացման կը ներկայացնէ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Պէտք է որ իւրաքանչիւր նիստի ատենադրութիւն յաջորդին ներկայանայ անվաւեր, իսկ եթէ հակառակը պատահի, այն պոտն Գիւանը պարտաւոր լինի զոճացուցիչ բացատրութիւն տալ ժողովոյն : Ատենադրութիւններն եթէ ժամանակին չհասնին, ինչպէս երեսօտիսան մը կրնայ տեղեկութիւն առնուլ այս կամ այն ինչորոշն նկատմամբ՝ որ նախնիք նիստերու մէջ յուզուած է արդէն, եւ ըստ այնմ այդ մասին կարծիք յայտնել եւ խօսիլ :

ԻՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. (Երրորդ Ատենապետ) Այլատեան ԷՖ. ի զխոտովեանց Ատենապետ ԷՖ. յանուն Գիւանին պատասխանեց եւ Ատենադպիր ԷՖ. քանի մը բացատրութիւններ յարեց այդ պատասխանին : Ես ալ իրր անգամ Գիւանի, կը յայտարարեմ թէ իմ մտիս բնաւ որ եւ է պատասխանատուութիւն չեմ յանձն առնուր եւ թէ Գիւան ըսուած մարմինը գոյութիւն չունի : Ժողովն 15 օրն անգամ մը նիստ ընել կորոչէ, եւ սակայն այս որոշումն անգործարդելի մնալով ժողովոյ նիստերը կը յետաձգուին, ո՞վ է գործողը, ո՞վ է պատասխանատուն, յայտնի չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Թէ ինչ պատճառներով եւ ո՞ր ժամանակէն 'ի վեր ատենադրութեանց տղադրութիւնը ուշացեր, եւ այսպէս զիգուեր են, ամենէն քաջ զիտէ Օղակէն ԷՖ. նստին, վասն զի ատենադրութիւններն երբեմն իւր տղարանին մէջ կը տղադրուէին, եւ խիստ շատ կերկարաձգուէր անոնց տղադրութիւնը :

ԻՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. (Ընդ միջեւում) Շատ սխալ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ժամանակին պատճառներ արուեր եւ գործը այս վիճակին հասեր է հիմա, չարժէր որ այս ինչորոշն վրայ երկարօ-

րէն խօսուի եւ վիճի նիւթ դառնայ : Իսկ երբ Օղակէն ԷՖ. զիւանական գործողութեանց մասնակից չգտնուելուն համար պատասխանատուութիւն յանձն չառնուր, ճիշդ այն պատասխանատուութիւն կը հրաւիրէ իւր վրայ, վասն զի ինքն ալ ըստ որում Գիւանի անգամ պարտաւորութիւն ունի իւր պաշտօնակցաց աջակից եւ գործակից գտնուելու, սակայն Օղակէն ԷՖ. հետի կը կենայ իւր պաշտօնէն, այնպէս որ նիստի օր մը երբ առաջին ու երկրորդ Ատենապետները բացակայ էին ժողովէն, մինչեւ իսկ իւր Ատենապետի պաշտօնը յանձն չառաւ վարել :

ԵՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. Ատենադրութեանց ժամանակին չհասնելուն պատճառը ոչ տղարանն է եւ ոչ ալ ինչ, այլ միայն Ատենադպիր ԷՖ. ի անոնց արդարութիւնը ժամանակին չուտով չկատարելն է, եւ անգամ մը ետը Գիւանադպիր Թէլեան ԷՖ. ին հարցուցի, սրբազրութիւնը մնացած է ըսաւ : Ար կրկնեմ թէ Գիւանը գոյութիւն չունի եւ յանուն Գիւանի որ եւ է պատասխանատուութիւն յանձն չեմ առնուր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Արդարեւ Ընդհ. Ժողովոյ զիւանին բռնած ընթացքն այն է որ ժողովէն դուրս գոյութիւն չունի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Քանի որ ատենադրութեանց համար արդարաբարութիւն կը լինի ժողովին կողմէ, Գիւանը կը խոտաանայ այսուհետեւ ատենադրութիւններն ժամանակին հասցնել եւ եթէ երկարաձգութիւն մը տեղի ունենայ, զոհացուցիչ բացատրութիւն տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Արդէն զիւանը խոտովանեցաւ իւր պակասութիւնը, ուստի աւելորդ է խօսքը երկարել : Այսօր պատրաստ ատենադրութիւնները կը վաւերանան եւ ես մնացածներն ալ կը հասնին յառաջիկայ նիստին :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Բոլոր ետ մնացած ատենադրութիւնները միահամուռ քուէի պէտք է դրուին եւ այսուհետեւ կանոնաւորապէս ամեն նիստի ատենադրութիւն յաջորդին ներկայանայ անպատճառ :

ՊԱՋԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. Կը կրկնեմ Այլատեան ԷՖ. ի առաջարկութիւնը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. Կառաջարկեմ որ զիգուած ատենադրութեանց վրայ զխոտովութիւն ունեցողներն յաջորդ նիստին սկիզբը ի-

րենց զխոտովութիւնները գրով ներկայացնեն Գիւանին, եւ ատենադրութիւնները միահամուռ նոյն օրը վաւերացման ենթարկուին :

Երեսօտիսաններէն շատեր այս առաջարկութեան կը ձայնակցին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Շատ աղէկ, յառաջիկայ նիստին բոլոր ատենադրութիւնները ժողովոյն պիտի ներկայանան եւ զխոտովութիւններն կանխաւ գուար կերպիւ հաղորդուին Գիւանին :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Սակայն այս աւելորդ նիստին ատենադրութիւնն ալ միաներուն հետ մէկտեղ ներկայացուելու պայմանաւ :

Ժողովն Ատենապետ ԷՖ. ի յայտարարութեան վրայ ատենադրութեանց վաւերացումը յաջորդ նիստին կը թողու :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. Նախագահ Սրբազանն այս աւելորդ նիստին համար երեսօտիսանայ մասնաւոր հրաւիրադրեր յուղարկելով յայտնած է թէ ստիպողական ինչորոշ մը վրայ ժողովին հետ խօսելիք ունի, կը խնդրեմք որ բնաւ հորին Սրբազանութենէն որ ինչ որ է ինչորոշ յայտնէ՝ ժամանակ չանցած :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Նախագահ Սրբազանը Գիւանին քան մը յայտնած չէ եւ նոր ինչոր մը չ'կայ ժողովոյ սեղանին վրայ գրուած : Օրուան կարգին մէջ ատենադրութեանց վաւերացման խնդրէն ետեւ կուգայ Վեհ. Կաթուղիկոսի կոնդակի խնդիրն, որու վրայ ըստուած վիճարանութիւնը պիտի շարունակուի, սակայն ասկէ առաջ ուրիշ ոչ նուազ ստիպողական խնդիր մը կայ եւ այն է Կոթն Եկեղեցական երեսօտիսաններու նոր ընտրութեան վաւերացումը, որու վրայ կը հրաւիրեմ նախ ժողովոյ ուշադրութիւնը :

Չ. ՎԵՐԵՐՇՈՒՄԸ ՆԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒԿԸ ԵՐԵՍՓՈՒԼԵՑ

Ատենապետ ԷՖ. այս ընտրութեան վրայ եկած տեղեկագիրը ժողովոյ ներկայացնելով ընթերցաւ զայն, որու ահաւասիկ պատճէնը,



վր կը ցրուի : Անտառակ ծրինակը , երեսիտ-  
խան մը շարունակ երեք անգամ չներկայանալով  
ժողովին , ուստի հրամարեալ համարուելով  
կերթայ ժողովէն , ո՛րք զնաց իւր պատահա-  
նատուութիւնը : Քաղ ժողովը տեղեկագիր մը  
կը բերէ համարատուութեան , այն է միայն իւր  
պատասխանատուութեան պայմանը , բայց  
այս ալ անբաւական է , ամեն բն . Պատրիար-  
քին վրայ ծանրացած է հարկաւորագէտ , եւ  
ես չեմ կրնար այս վիճակին մէջ այդքան ծանր  
բեռ ստանձնել , Իրաւունք ունիմ ըսելու թէ  
սիրտս նեղցած է , ժողովը պէտք է քայլէ ,  
բայց մենք կրնայի չափ ալ չեմք կրնար յա-  
ռաջ երթալ , այս է իմ անձկութիւնս :

Ժողովը Սանճանագրութեան վերաբնու-  
թիւնը խնդրոց կարգն անցուց , զայն կը պա-  
հանջեմ : Փորձով հասկցուեցաւ թէ յատենի  
աստ վերաքննութիւնը կատարել անհնար է ,  
այլ պէտք է Յանճանագրուող մը յանձնել զայն ,  
ինչպէս արդէն եղած էր : Եթէ ներկայ Սան-  
ճանագրութիւնը մեզի բաւական է , ուրեմն ք-  
սէք որոշակի թէ վերաքննութիւն պէտք չէ  
եւ պէտք է այդ խնդիր վերցնել , բայց չեմ  
հակնար թէ ինչ կը նշանակէ վերաքննութիւ-  
նը որուան կարգն անցնել , մինչեւ ԿՅրդ նիս-  
տը շարունակել եւ ի վերջէ երևել ըսել թէ  
հարկ չկայ վերաքննութեան : Կը լսեմ որ ըն-  
կերութեանց մէջ կրանն ո՛վ կերաշխատուի մեզ  
որ Սանճանագրութիւնը վերաքննուելէ ետեւ  
Բ . Գուռն վաւերացիք զայն , եւ ազգին վերա-  
դարձնէ : Աճաւասիկ Երկման կերաշխատուի ,  
նախապայշարումներ եւ անտեղի կատարման  
անտոնք , բնաւ երկիւզի պատճառ չկայ , արդէն  
Ազգն ալ կրնայ ինքնին պէտք եղած փոխու-  
թութիւններն ընել եւ գործադրել , վասն զի  
Բ . Դրան վերաբերեալ մասն մէկ քանի արա-  
մադրութիւններէ կը բազկանայ եւ այն ալ ան-  
փոփոխելի սկզբանայ կարգն է :

Հիմա Վեճ . Կաթուղիկոսի կոնդակի խնդ-  
րը լուծուելէ ետեւ Յանճանագրով մը կը  
դրուի Սանճ . վերաքննութիւնը կատարելու  
պաշտօնով : Ապրիլարութեան նշան եւ ամօթ է  
մեզ համար այս տեսակ ներքին կենտանի  
խնդիրներ անլուծանելի թողուլ եւ չգործել ,  
Թերեւս ըսեն ինձ համար թէ չգիտէր ազգաց  
առաջադիմութեան կանոնը , գիտեմ թէ ինչ  
կերպով ազգերը քայլ կատարու յառաջադիմու-  
թեան ճանրուն մէջ , եւ չեմ ուզիր որ Հայոց

ազգ իրը Արեւելեալ նշանաւոր ազգ մը այս  
վիճակին մէջ մնայ : Եթէ Սանճանագրութեան մասին խորհած  
առաջարկութեանս վրայ դիտողութիւն չկայ ,  
լաւ , եթէ ոչ նախ կոնդակի խնդիրը կը լուծ-  
ուի , եւ անկէ վերջ ժողովը վերաքննութեան  
խնդիրը ձեռք կառնու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Ժողովը նախադաս Սրբա-  
զան Հօր խօսքը որու կախնալիէր իւր մասնա-  
ւոր հրաւիրողին մէջ , իմացաւ , ուստի դի-  
ւանն որուան կարգին պիտի անցնի :

ԻԹԻՒՆԵԱՆ Կ . ԷՖ . Խօսք ուզած էի նա  
խագահ Սրբազան Հօր մասնաւոր հրաւիրողին  
նկատմամբ Պէկեան ԷՖ . ի պահ մը առաջ ըրած  
առաջարկութիւնը կրկնելու , բայց նախագահ  
Սրբազանը խօսեցաւ արդէն , ուստի խօսք  
չունիմ :

Յ ԿՈՆԴԱԿ ՎԵՃ . ԿԵՓՈՒՂԿՈՍ

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Վեճ . Կաթուղի-  
կոսի կոնդակի խնդրոց նկատմամբ նախորդ  
նիստերու մէջ ինչ առաջարկութիւններ որ ե-  
ղած էին , Ատենագետ ԿՓէնտին ԿՅրդ նիստին  
մէջ ժողովոյ յիշեցուց համառօտաւ , հետեւապէս  
վիճարանութիւնը շարունակուելով , խնդիրը  
որ ուրեմն երկու կէտի վրայ եկաւ կեցաւ , եւ  
այն է կամ Յանճանագրուող մը կամ Ազգ . Վար-  
չութեան Գրան ժողովոյ յանձնել այս կոնդակի  
խնդիրը , որ քննէ թէ Վեճ . Կաթուղիկոսի կող-  
մէ ուզուած պատգամաւորները զրկել հարկ է  
թէ ոչ , եւ եթէ հարկ է , այդ պատգամաւ-  
որաց պաշտօնը եւ արտօնութիւնները ինչ պիտի  
լինին , եւ այս կէտերուն վրայ տեղեկագիր մը  
բերէ Ընդ . Ժողովոյն : Իսկ Ատենագետ ԿՓ .  
գիտել տալով ժողովին որ խնդիրը տնաս է դեռ  
եւ քաղաքական կողմեր ունի բացատրութեան  
կարօտ , առաջարկեց յատուկ նիստ մը կազմուի  
եւ խնդիրը թէ մ'աւելի լուսարանուելէ ետեւ  
Յանճանագրուող յանձնուի : Սակայն Ատենա-  
պետ ԷՖ . դժբաղդարար անցեալ նիստին  
ներկայ չըլլալով չխօսուեցաւ այս կէտերուն  
վրայ : Ուստի այսօր ամենէն առաջ իրն է  
խօսելու կարգն եւ շեռոյ ուրիշներուն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . ԿՅրդ նիստին մէջ ինչ որ  
տեղի ունեցած է , չգիտեմ ճիշտ այդ կերպով

եղաւ , թէ ոչ , միայն սա կը յիշեմ որ այն ան-  
գամ երբ արդէն օրն տարածած էր եւ նոյն  
միջոցին այլ եւ խօսքեր տեղի կ'ունենային , ք-  
սի թէ ես ալ խօսելիքներ ունիմ եւ թէ խնդիրն  
անպատճառ ազգին օգտակար չ'ուծուի : պիտի  
ըստանայ , եթէ իրարու գէժ յորուցեալ կիրքերն  
ու անտեղուցութիւններն իրաց նետելով լաւ ջի-  
ճարանութիւն մը տեղի ունենայ եւ անոր հա-  
մար մասնաւոր նիստ մը առաջարկեցի : Ըսին  
ինձ թէ լաւալոյն է այս խնդրոցն համար Յանճ-  
նագրով մը կարգել եւ հոն ինչ որ հարկ է  
խօսել , հիմա ես ալ բացարձակ կերպով անմի-  
ջապէս Յանճանագրուողը դրուելուն կողմնակից  
եմ : եւ եթէ Յանճանագրուող ուզէ զիս լսել ,  
պատրաստ եմ անոր առջեւ խօսելու :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Ուրեմն հիմայ  
հարկ է խօսիլ այն կէտին վրայ թէ խնդիրն  
Խառն ժողովոյ թէ ոչ Յանճանագրուող մը յանձ-  
նել պէտք է : Ես ինչպէս ԿՅրդ նիստին մէջ ա-  
ռաջարկեցի եւ ըսի , նորէն կրնեմ թէ Սոյ կա-  
թուղիկոսի խնդրոցն մէջ ժամանակին Քաղ . Ժո-  
ղովն առանց կրօնականին խորհրդակցութեան  
չարժամ է եւ նորէնտիր Ազգ . Վարչութեան  
Խառն ժողովն այս մասին չէ քանակցած բնաւ  
Վեճ . Կաթուղիկոսի հետ , պէտք է որ խնդիրը  
Խառն ժողովոյ յանձնուի , որպէս զի միանգամ  
եւս նա զրակցի Վեճ . Կաթուղիկոսին հետ , եւ  
տեղեկագիր մը բերէ Ընդ . Ժողովին Վարչու-  
թեան Խառն ժողովը արդէն Ընդ . Ժողովոյ մէկ  
Յանճանագրուող կը համարուի , եւ աւելորդ է  
ըսա իս այս խնդրոցն համար զատ Յանճանագ-  
րով մը կարգել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Խնդիրն ամփոփեմք Վեճ .  
Կաթուղիկոսի կոնդակին վրայ բացուած վիճա-  
բանութեամբ երկու առաջարկութիւն երեւան  
եկած է , մինն է նոյն վիճարանութիւնը հոս  
յատենի Ընդ . Ժողովոյ շարունակելով պէտք  
եղած որոշումը տալ , իսկ միւսն է , որու ես  
ալ յարեցայ , փոխանակ վիճարանութիւնն ուր  
փախուկ կէտեր ալ կը գտնուին , հոս շարունա-  
կելու յանձնել Ընդ . Ժողովն դուրս մարմնոյ  
մը , այսինքն , կամ Ազգ . Վարչութեան խառն  
ժողովոյ կամ Յանճանագրուող մը , որպէս զի նա  
պէտք եղած քննութիւնն ընէ եւ խնդրոցն  
լուծման եղանակին վրայ տեղեկագիր մը տայ :  
Հիմա այս երկու առաջարկութիւնները քուէի  
պիտի դնեմ եւ եթէ ժողովն առաջին առաջար-

կութիւնն ընդունելով որոշէ այս կոնդակի  
խնդիրը իրն դուրս մարմնոյ մը յանձնել , այն  
ատեն վիճարանութիւնը անմիջապէս դրոցելով  
ժողովէն ուրիշ քուէ մը պիտի խնդրեմ որոշե-  
լու համար թէ խնդիրը Խառն ժողովոյ պիտի  
յանձնուի թէ ոչ յատուկ Յանճանագրուող մը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . Կէտ մը կայց որ պէտք չէ  
անմիջապէս թողուլ , Յանճանագրուող չէ թէ խնդ-  
րոցն վրայ միայն իւր մէջ պիտի վիճաբանի այլ  
նաեւ հարկ է որ Վեճ . Կաթուղիկոսի հետ բա-  
նակցի եւ այնպէս բերէ իւր տեղեկագիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Եթէ անիջ խօսք ուզող  
չկայ , քուէի կը դնեմ խնդիրը :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Թէ եւ արդէն իմ  
կարծիքս յայտնած եմ , բայց կը տեսնեմ որ  
քուէարկելի խնդիրը ուրիշ կերպարանք մ'ա-  
ռաւ ուստի նորէն կուզեմ խօսիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Եթէ թիւր կերպով ամ-  
փոփոցի խնդիրն , սերեմն սխալն ուղղեցէք :

ԱՎԱՋԱՐՈՍԵԱՆ Գ . ԷՖ . Քուէ կամաջար-  
կեմ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Հարկ չէ ընաւ  
քուէարկել թէ այս խնդիրը ժողովը ինք կուզէ  
քննել թէ ոչ զատ մարմնոյ յանձնել , այլ քուէ  
արկելի կէտը սա է թէ խնդիրը Խառն ժողովոյ  
պիտի յանձնուի , թէ ոչ յատուկ Յանճանագրու-  
ող մը :

ԽՕՃ՝ՄԱՐԵԱՆ Օ . ԷՖ . Իսկ նա որ այս  
երկու առաջարկութիւններն միանգամայն չըն-  
դունիր եւ խնդրոցն յատենի Ընդ . Ժողովոյ  
յուզուիլն ու լուծուիլն կուզէ , ինչպէս տայ  
իւր քուէն :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Շատ աղէկ , թող  
առաջին առաջարկութիւնը քուէի դրո :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Ես իս քուէի դնել ուզած  
կէտս այս է Ընդ . Ժողովն Վեճ . Կաթուղիկոսի  
կոնդակի վրայ բացուած վիճարանութիւնը կու-  
զէ շարունակել , թէ ոչ ուրիշ մարմնոյ մը յանձ-  
նել :

ՊԵՆԱՆ . Թ . ԷՖ . Պիտի հարցում մ'ունիմ ,  
եթէ ժողովը որոշէ Վեճ . Կաթուղիկոսի կոնդա-  
կին վրայ բացուած վիճարանութիւնը դադրե-  
ցնել , խնդիրը Յանճանագրուող կամ Խառն ժո-  
ղովոյ յանձնելու առաջարկութեան վրայ վիճա-  
բանութիւն պիտի լինի թէ ոչ , Խառն ժողովոյ

յանձնելու առաջարկութեան դէմ եւ խօսք ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Այդ ուրիշ խնդիր է :

Ժողովոյն մէջ շուտ մը կընթանայ եւ պահ մը չփոթութիւն կը տիրէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . (Ատենադպիր Քաղ . ժողովոյ) Ազգ . Վարչութեան Խառն ժողովն այդ խնդիրն չընդունիր, ուստի պէտք է այդ կէտք քուէարկել :

ԽՕՃԱՍԱՐԲԵԱՆ Օ . ԷՖ . Եթէ միայն ձեր ուզած խնդիրը պիտի ընդունիք, ըսել է կընթա- ժարիք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ . ԷՖ . Պարտաւարտ կայ, որ բացատրութեան կը կարօտի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . (Ընդմիջելով) Խօսք չու- նիք :

Ատենադպիր էֆ . խնդիրը քուէի կը դնէ, եւ ժողովն ընդհանուր հաւանութեամբ կորչէ Վեհ . Կաթուղիկոսի կոնդակին վրայ բացուած վիճարանութիւնը զաղբեցնել, եւ այդ խնդիրը ուրիշ մարմնոյ յանձնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Հիմա խնդիրը Խառն ժո- ղովոյ պէտք է յանձնել թէ ոչ Յանձնաժողովոյ մը, այս կէտին վրայ պիտի խօսուի :

ՊԷԿԵԱՆ ԷՖ . Արդէն Ազգ . Վարչութիւ- նը գլուխ ունելով իրեն նախագահ Սրբազանը, Վեհ . Կաթուղիկոսին հետ բանակցութեան մը- տած է այս խնդրոյն համար, եւ Վեհ . Կա- թուղիկոսը, Վարչութեան պատասխանադրին վրայ յայդ կոնդակը ուղղած եւ բողոք բարձած է : Այժմ թէեւ Ազգ . Վարչութիւնը փոփոխ- տած, բայց անոր գլուխը, նորէն նախագահ Սրբազանն է : Ուստի անպատեհ է այդ խնդիրը Ազգ . Վարչութեան յանձնել : Կառավարկեմ ուրեմն այս խնդիրը յատուկ Մասնաժողովոյ մը յանձնել, որ իրեն գլուխ չունենայ նախա- գահ Սրբազանը, եւ այնուհետեւ Յանձնաժողո- վոյ տեղեկագիրը ներկայանայ Ընդհ . ժողովոյն, որու Սրբազան Պատշաճորբ կը նախագահէ :

ՆԱԽԱԳԱՋ Ս . Շատ աղէկ, իրաւացի է այդ գիտողութիւնը :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ . ԷՖ . Ես ալ կը հաւանիմ

ՊԷԿԵԱՆ ԷՖ . Կաթուղիկոսի գիտողութեան, բայց ՊԷԿ- եան էֆէնտին սա մոտցաւ յիշելու թէ Վեհ . Կաթուղիկոսն ոչ միայն Ազգ . Վարչութեան դէմ բողոքած է, այլ եւ նոյն իսկ Երեսօրիսա- նական ժողովն ալ ամբաստանած է . այս ամ- բաստանութեան քննութիւնն ալ պիտի յանձնուի նաեւ Յանձնաժողովոյ : Այս կէտը փոփոխու- ՊԷԿԵԱՆ ԷՖ . Ի ոչ յարգութեանն, մեր պաշտօ- նը խղճի մտօք կատարելու եւլք եւ ոչ թէ աղ- զեցութեան ներքեւ :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՖ . Այդ բաները բացատ- րութեան կը կարօտին, եւ ո՞վ է այն որ Ընդհ . ժողովոյ մէջ այդպիսի վիճակին մը մէջ կը գտ- նուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Ընդհանուր կերպով զուրցուած խօսքեր են ասոնք, ուստի աւելորդ է մեկնութիւններ փնտռել :

Տ . ՄԱՏԻԷՈՍ Վ . ԻԶՄԻՐԻԵԱՆ . Մինչեւ ցարդ խնդիրը կը յուզուի, բայց չեմք գիտեր թէ եղած ամբաստանութիւնը մինչեւ որ աստիճան կը հասնի, այս խնդիրը Յանձնաժողովը կընայ քննել եւ անոր կազմութեան համամիտ եմ :

Ատենադպիր էֆ . դիտել կուտայ թէ Ի- փէկճեան էֆ . Ի խօսքերն խնդրէն դուրս են, հետեւապէս Վեհ . Կաթուղիկոսի կոնդակը Ազգ . Վարչութեան Խառն ժողովոյ եւ կամ յատուկ Յանձնաժողովոյ մը յանձնուելու նը- պատակաւ եղած կրկին առաջարկութիւններն զառ զատ քուէի կը դնէ եւ ժողովն երեք հա- կանակ քուէի դէմ կորչէ Յանձնաժողով մը կարգել եւ անոր յանձնել խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Արդ՝ այս խնդրոյն վրայ ո՞վ որ տեղեկութիւն մը կամ խորհրդածութիւն մը ունի, կրնայ Յանձնաժողովոյ անձամբ կամ դրով հաղորդել, ինչպէս ես ինքս մտադիր եմ ընել : Յանձնաժողովոյ պաշտօնը պիտի լինի Վեհ . Կաթուղիկոսի կողմէ եկած վերջին կոն- դակին վրայ վիճարանիլ . եւ մտածել թէ այս խնդրոյն լուծման նկատմամբ ինչ ընթացք ար- ժան է բռնել, եւ թէ՛ Վեհ . Կաթուղիկոսին ինչ պատասխան տալ հարկաւոր է, եւ հետե- լապէս այս խնդրոյն վրայ տեղեկագիր մը բե- րել Ընդհ . ժողովոյն : Կաթուղիկոսական յա- բարբրութեանց խնդիրն ալ սոյն Յանձնաժողովոյ պաշտօնին մէկ մասը կը համարուի, բայց այս ետքի խնդիր է :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՖ . Ի՞նչ է այդ յարաբե- րութեանց խնդիրն, եւ այդ ալ միթէ Յանձ- նաժողովոյ պաշտօնին կը վերաբերի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . Կառավարկեմ որ Կաթուղիկոսական եւ Պատրարքական յարա- բերութեանց խնդիրը սոյն Յանձնաժողովոյ յանձնուի եւ այս կէտն ալ քուէի գրուի :

ԱՅՎԱՍՏԵԱՆ ՄԱՏ . ԷՖ . Ի՞նչ կը նշանա- կէ այդ յարաբերութեանց խնդիրը :

Գիւանէն անխոնակի կերպով այս ու այն կողմէն խօսքեր կը փոխանակուին երես- փոխանաց մէջ, եւ պահ մը շուտ կ'սկսուի ժողո- վոյ մէջ ընթանալ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ . ԷՖ . Կարծեմ ընտրելի Յանձնաժողովին պաշտօնն է առանց անցնալին վրայ դատաստան ընելու եւ կատարուած ի- բողութիւնները քննելու, մտածել սիայն թէ Վեհ . Կաթուղիկոսի կողմէ եկած վերջին կոն- դակին մէջ եղած առաջարկութիւնը գործադ- րել հա՞րկ է թէ ոչ, եւ այս մասին տեղեկա- գիր մը բերել Ընդհ . ժողովոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Ես իբր Ատենադպիր մեծ պակասութիւն մը գործած կը լինէի, եթէ Յանձնաժողովոյ պաշտօնը չպարզած՝ անոր կազմութիւնը քուէի դնէի : Յանձնաժողովոյ պաշտօնը սահմանուած է արդէն որոշակի եւ ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն վիճարանութիւնն՝ որ Վեհ . Կաթուղիկոսի կոնդակին նկատմամբ սկսաւ Ընդհ . ժողովոյ մէջ, շարունակել, խնդրոյն լուծման եղանակին վրայ խորհիլ եւ տեղեկագիր մը բերել Ընդհ . ժողովին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . Այո՛, բայց ՚ի հար- կին Վեհ . Կաթուղիկոսին հետ բանակցելու պայմանաւ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Չենք կարող հիմայ ժո- ղովոյ քուէին նպատակը փոփոխել, եւ Յանձ- նաժողովոյ պաշտօնին այլ եւ այլ տրամադրու- թիւններ վերագրել, եթէ Յանձնաժողովը բա- նակցութեամբ լուծելու կէտ մը տեսնէ, կը գիմէ այն ատեն Ընդհ . ժողովին եւ վարչու- թեան միջոցաւ այդ բանակցութիւնը կը կատա- րէ : Արդ՝ որոշեմք թէ Յանձնաժողովը քանի անգամէ պիտի բաղկանայ :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՖ . Կառավարկեմ որ Յանձ-

նաժողովը 12 անգամէ բաղկանայ, որոնց կէսն Եկեղեցական լինի եւ կէսն աշխարհական :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Առաջարկուած թիւը յարմար կը գտնեմ, Յանձնաժողովը կէս առ- կէս եկեղեցական եւ աշխարհական անդամներէ կընայ բաղկանալ, կը հարցնեմ հիմա թէ ժողովը գիտողութիւն մը ունի այս թուոյն դէմ, կը հարցնեմ ժողովոյ թէ ինչ կերպով կուզէ ընտ- րութիւնը կատարել, գաղանի քուէարկութեամբ թէ ոչ գիւանին միջոցաւ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . Թող գիւանն Յանձ- նաժողովոյ անդամներն անուանէ երկուստեք, ընդդէմ եւ ՚ի նպատակով կուսակցութիւն- ներէն : Այս կերպով Յանձնաժողովը կազմուե- լով զիւրիւթիւն կունենայ խնդրոյն վրայ կա- տարեալ վիճարանութիւն մ'ընելու եւ աղէկ լուսարանուած Ընդհ . ժողովոյ զայն ներկայա- ցընելու :

Գիւանը Յանձնաժողովոյ անդամոց ցու- ցակը պատրաստելու կը ձեռնարկէ :

ՆԱԽԱԳԱՋ Ս . Ներեցէք, միաքս այլ եւ այլ մտածումներով սրաշարեալ էք եւ չկրցի- քաջ ըմբռնել թէ ինչ եղանակաւ սահմանուե- ցաւ Յանձնաժողովոյ պաշտօնը : Եթէ միայն կոնդակի խնդիրը պիտի քննէ, եթէ Վեհ . Կա- թուղիկոսի եւ մեր յարաբերութիւնները չպար- զուին, անոնց սահմանը չգտնուի, խնդիրն ան- վերջանալի եւ կնճիւրն անլոյծ պիտի մնայ, այն- պէս որ երեք ամսէ ետեւ ալ՝ ուրիշ խնդրոյ մը համար ուրիշ կոնդակ մը պիտի գայ եւ ա- մեն անգամ Յանձնաժողովներ կարգել հարկ լի- նի : Եւ ես հեռագրով Վեհ . Կաթուղիկոսին ե- րեք վստահելի անձեր պիտի խնդրեմ, որ ընդ- րելի Յանձնաժողովոյ անդամակցին եւ անոր միջոցաւ այս յարաբերութեանց խնդիրն կարգի գրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Յանձնաժողովոյ պաշտօ- նը գծուած է արդէն եւ խնդիրը հոս գոցուած :

Գիւանն Յանձնաժողովոյ անդամոց ցու- ցակը պատրաստելով կը ներկայացնէ ժողովոյն, նշանակեալ անձերէն ոմանք անդամակցութիւնն յանձն չեն տուուր, ուստի քանի մը փոփոխու- թիւններ տեղի ունենալով Յանձնաժողովոյ ան- դամ կընտրուին :

- 1. Տ. Ներսէս Եպիսկոպոս վարժապետեան .
- 2. Տ. Խորէն Եպիսկոպոս Նար-պէյ .

- 3. Տ. Մատթէոս Վ. Իզմիրեան .
- 4. Տ. Մարթէ Վ. Մամիկոնեան .
- 5. Տ. Յովհաննէս քահանայ Մկրեան .
- 6. Տ. Սահակ » Միջագիւղի .
- 7. Ասլանեան Ստեփան փաշա .
- 8. Մերեթմ-գուլի Յարութիւն էֆ .
- 9. Խօճատարեան Օգսէն »
- 10. Պատնասեան Պօղոս »
- 11. Պէկեան Թադէոս »
- 12. Յովակիմեան Յովհաննէս »

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Օրուան կարգին մէջ կայ նաև կաթնոցիկոսական եւ Պատրիարքական յարաշերտութեանց խնդիրը , զոր ժողովը նկատողութեան առնելու համար՝ կարծեմ քիչ մը սպասելու է որ նորընտիր Յանձնաժողովն իւր գործը յառաջ տանի :

ԱՅՎԱՏԵՍՆ ՄԱՏ . ԷՖ . Զգիտեմք թէ ո՞վ է այդ խնդրոյն հեղինակը , չգիտեմք թէ ո՞վ է անցուցեր զայն օրուան կարգին մէջ եւ ինչպէս կարելի է յարաբերութեանց խնդիր հընարել , եւ սահման գծել առանց Վեհ. կաթնոցիկոսին հաճութիւնն ստանալու :

ՊԵՆԵԱՆ Թ . ԷՖ . Կաղաչեմ որ ժողովը թոյլ տայ ինձ Յանձնաժողովոյ անդամակցութեան հրաժարելու , վասն զի կը փափաքէի որ երկու կուսակցութեանց բաղկանար նա , որպէս զի գործը դիւրանար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Արդէն ընդդիմախօս կողմէն Իփէկճեան էֆէնտին Յանձնաժողովոյ պիտի ներկայանայ իւր զիտողութիւններն յայտնելու , ինչպէս նաև ամեն անոնք որ տեղեկութիւն մը , խորհուրդ մը ունին պիտի կրնան Յանձնաժողովոյ հաղորդել , հետևապէս Յանձնաժողովոյ համար միջոցներ չեն պակսիր խնդիրը պարզելու , իսկ յարաբերութեանց խնդրոյն նկատմամբ Այվատեան էֆ . ի ըրած զիտողութեան պատասխանը՝ Գիւանը յաջորդ նիստին կրնայ տալ , վասն զի հարկ է նախ ատենագրութիւններն աչքէ անցնելով տեղեկանալ թէ ինչ եղանակաւ յարաբերութեանց խնդիրն օրուան կարգն է անցեր :

Ժողովը կանցնի օրուան կարգին

**2. ՀԱՐՑՈՒՄՆ ԻՆՆ ԵՐԵՍՓՈՒԵՆՆՈ**

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Երուսաղէմայ սուրբ Յա-

կրայ վանուց մէջ Լատինաց պատարագելու խնդրոյն նկատմամբ՝ հարցում մը կայ եղած ինն երեսփոխանաց կողմէ , եւ անկէ՝ ՚ի վեր եօթն ամիս անցած է եւ դեռ հարցումը կը մնայ օրուան կարգին մէջ : Ոչ եւս այս խնդիրը կըրնայ մնալ այսպէս , եւ հարկ է որ օրուան կարգէն սրբուի : Ահաւասիկ հարցումը :

Մեծ . Ատենապետ

Ազգ . Ընդհ , Ժողովոյ

Ս . Իրուսաղէմայ վէճի տակ եղած մեր ազգին սեպհական սուրբ տեղեաց մէջ լատինացուց պատարագելու խնդրոյն վրայօք առկէց առաջ լսուած էր թէ Պատրիարքարանէն հեռագիր քաշուեր է առ Ամեն , Ս . Պատրիարքըն Երուսաղէմայ , որպէս զի լատինացուց թոյլտուութիւն լինի պատարագելու :

Այս լուրն ստոյգ է , եւ եթէ ստոյգ է ինչ պատճառաւ եւ որոյ տնօրէնութեամբ ՚ի գործ զրուած է , կը հարցնեմք հրաժարեալ Քաղ . Ժողովոյ դիւանին , եւ գոհացուցիչ պատասխանը ստիպողաբար կը խնդրեմք :

16 յունիս 1872 (Սորբ-էր-Պէ-Ն+)

ՆԱԽԱԳԱՀ Ս . Կռաչեմ գիտնալ թէ ՚ի պաշտօնէ այդ խնդիրն Ընդհ . Ժողովոյ ատեանը ելած է թէ ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . Ո՛չ , եկած չէ , այլ միայն հարցում մը կայ եղած այս մասին :

ՆԱԽԱԳԱՀ Ս . Եթէ այս խնդիրը մասնաւորապէս Ընդհ . Ժողովոյ ատեանը եկած լինէր եւ Քաղ . Ժողովն կամ Պատրիարքն ինքն ինքնին տնօրէնութիւն մը ըրած ըլլային , այն ատեն այդ տեսակ հարցում մը կրնար ուղղուիլ , սակայն խնդիրը Քաղ . Ժողովին եկեր է եւ այդ ժողովին չգոյութեան ատեն անոր հրաժարումէն վերջը Հայոց Պատրիարքը առանձին տնօրինութիւն մը ստեղծուեր է ընել այդ մասին , որու մէկ նշանախնդն անգամ պարտաւորութիւն չունի յայտնելու եւ ոչ ալ զուք իրաւունք ունիք ինձ հարցում ուղղելու :

Քանի մը նստարաններէ բարձրաձայն , — ո՛չ , ո՛չ , չեմք ընդունիր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . Նախագահ Սըրբազանին խօսքը ուղղեցէք , չեմք ընդունիր :

ՊԵՆԵԱՆ Թ . ԷՖ . Եթէ Քաղ . Ժողովն իւր համարատուութեան տեղեկագիրը բերած լինէր , հարկ չպիտի մնար այդ հարցումն ուղղելու , բայց չեկաւ եւ հարցման պէտքն զգալի եղաւ : Արդէն երեսփոխանները միշտ իրաւունք ունին ազգային այս կամ այն խնդրոյն վրայ հարցում ընելու , եւ գործադիր պաշտօնէութիւնը կամ մարմինը միշտ պատասխանատու է զինքն ընտրող մարմնոյն , եւ բացատրութիւն տալու պարտաւոր : Նախագահ Սըրբազանին խօսքը կերելի թէ սխալ հասկացողութենէ մը առաջ եկած է :

ԵՌԻՍՈՒՓԵԱՆ Տ . ԷՖ . Իբր Ատենապետին նախորդ Քաղ . Ժողովոյ պարտաւորութիւն կըլլաւ ջրել Պէկեան էֆ . ի այն խօսքը թէ՛ նախորդ Քաղ . Ժողովն իր համարատուութեան տեղեկագիրն տուած չէ ցարդ : Քաղ . Ժողովն իւր հրաժարականին հետ նաև իւր տեղեկագիրը ժողովոյն ներկայացուցած եւ Գիւանին յանձնած է . իսկ եթէ ցարդ տպագրութեամբ ՚ի լոյս ելած չէ , այս երկարաձուլութիւնըն ալ ատենագրութեանց տպագրութեան խնդրոյն յարակից է : Երկրորդ՝ կը յայտարարեմ թէ նախորդ Քաղ . Ժողովը ընաւ որ եւ է հեռագիր քաշած չէ Երուսաղէմայ Ս . Պատրիարքին Լատինաց պատարագելու թոյլտուութիւն ընելու համար , եւ արդէն ըսած եմ թէ ա ս տարածայնութիւնը սուտ է եւ սխալ : Եթէ այդ խնդրոյն վրայ որ եւ է տնօրէնութիւն մը եղած է , նախորդ Քաղ . Ժողովը չը ճանչէր զայն եւ պատասխանատու չէ : Իսկ եթէ կասկած կայ այս մասին , կրնայ արդի Քաղ . Ժողովոյ Գիւանին հարցուիլ որ պէտք եղած քննութիւնն ընէ եւ պատասխան տայ Ընդհ . Ժողովին : Վասն զի իբր սահմանադրական սկզբունք՝ հրաժարեալ Վարչութեան մը որ եւ է խնդրոյ վրայ հարցում չկրնար ուղղուիլ եւ բացատրութիւն պահանջուիլ , այլ միայն անոր վրայ ամբաստանութիւն կրնայ լինիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . (Առ Երուսաղէմայն էֆ . ուղղելով խօսքը) Սահմանադրական կառավարութեանց մէջ՝ երբ Վարչութիւն մը համարատուութիւն կրնէ առանց դատապարտութեան վճիռ ընդունելու , իւր գործը վերջացած է :

Պէկեան էֆէնտի զիտողութիւնը ան-

պատճառ նախորդ Քաղ . Ժողովին կողմէ՝ ատենկ հեռագիր մը քաշուած լինելուն վրայ չէ : Եւ քանի որ յայտնի է թէ Ձեր պաշտօնատարութեան օրով այդ գէպքը չէ տեղի ունեցեր , դուք հիմայ օտար էք այս գործին մէջ , Ընդհ . Ժողովը ձեզի հետ գործ չունի , այլ Սըրբազան Նախագահին ուղղեալ է հարցումը , ուստի մի՛ խճողէք խնդիրը :

ԽՍՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . Ժամանակէ մը ՚ի վեր օրուան կարգին մէջ «Հարցումն ինն երեսփոխանաց» անունով խնդիր մը կար նշանակուած , առանց անոր նիւթը բացատրուած լինելու , բայց այժմ հարցումն երեւան ելնելով ամեն ոք հասկցաւ թէ Լատինաց պատարագելու խնդրոյն նկատմամբ Երուսաղէմ քաշուած հեռագրի մը վրայ է խնդիրը : Նախագահ Սըրբազանը հարցուց թէ այդ տեսակ խնդիր մը եկած է ժողովին՝ եւ Գիւանը բացասական պատասխան տուաւ յորմէ Նախագահ Սըրբազան հետեւցուց թէ այդ մասին բացատրութիւն տալու պարտաւորութիւն չունի : Նախագահ Սըրբազանի այդ ըրած հարցումն սխալ էր , եւ անկէ ալ իր սխալ պատասխանը հետեւեցաւ : Ամենէն առաջ պէտք է գիտնալ թէ այն ամէն խնդիրներն որոնք ազգային են , Ընդհ . Ժողովոյ կը վերաբերին , եւ անոր կողմէ Ազգ . Վարչութեան տնօրինութեան յանձնուած են , եւ երբ Ընդհ . Ժողովն ատենէ թէ Վարչութիւնը այս կամ այն խնդրոյն մէջ ձախող դիրք մը ընած է , ոչ միայն իրաւունք ունի բացատրութիւն ուղղելու , այլ եւ կրնայ ՚ի հարկին նաև յուզողութիւն հրաւիրել զայն : Իսկ նախորդ Քաղ . Ժողովոյ Ատենապետին այդ հեռագրին քաշուելուն համար սուտ ու սխալ է , կըսէր , բայց ինչպէս կրնայ մարդ իր չզիտցած բանին համար սուտ է ըսել , աւելի պատշաճ էր ըսել թէ նախորդ Քաղ . Ժողովն անտեղեակ է այդ խնդրոյն , վասն զի իրողութիւնը կեցած է , եւ ես ահաւասիկ կը յայտնեմ թէ Պատրիարքարանի Գիւանատան արձանագրութեան մէջ խնդրոյ ներքեւ ինկած այդ հեռագրին օրինակը կայ , եւ գիտեմ նաև որ այդ հեռագիրը Քաղ . քէհեասի էֆ . ին միջոցաւ պէտք եղած տեղը դրուած , սրբագրուած եւ այնպէս ուղղուած է Երուսաղէմայ Սըրբազան Պատրիարքին , ուստի նախորդ Քաղ . Ժողովոյ Ատենապետը չկրնար ըսել թէ սուտ է :



և ևս ալ, եւ երբ սխալ է, կըսէ, կը նշանակէ թէ իրողութիւն մը կայ կատարուած :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. Նախորդ ֆաղ. ժողովն այդ ամենն ալ չդիտէր : Հաստատեցէ՛ք թէ անոր պաշտօնատարութեան օրով այդ տեսակ հետազոտ մը քաշուած է, եւ կուրանամ եւ դուք կրնաք ապացուցանել :

ԻՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. Նոյն իսկ այդ տեղեկութիւն չունենալնից է որ զձեզ պատասխանատու կրնէ ընդհ. ժողովոյն անջեւ : Կը մնայ հիմա բուն խնդիրն, այդ հարցումը քանի մը ամիսներ առաջ եղած է, ստիպողական կերպով, սակայն որ եւ է էքիբիւստիցարդ յետաձգուել է : Եթէ ֆաղ. ժողովը գործակցութիւն չէ ունեցեր, կը հարցուի հիմա Նախագահ Սրբազան Հօր թէ այդ տեսակ հետազոտ մը քաշուած է թէ ոչ :

ՆԱԽԱԳԱՀ Ս. Սահմանադրութեան մէջ կարեւոր կէտ մը կայ, եւ կը ցաւիմ որ ձեր ուղարկութեանէն վրիպած է այն : Ընդհ. ժողովը զանիակ նիստ ալ ունի եւ Հայոց Պատրիարք այդպիսի պարագաներու մէջ է որ ամեն խնդիր չկրնար յայտնել, Կան խնդիրներ որ մինչեւ իսկ հասարատուութեան տեղեկագրին մէջ ալ չեն անցնիր, եւ որոնք վարչութեան գործոց մէջ երկրորդ մասը կը կազմեն :

ԻՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. (ընդմիջելով) Այդ խնդիրներն ալ կանցնին, բայց սակաւ ինչ անգուն :

(Ազմուկ) :

ՆԱԽԱԳԱՀ Ս. (չարունակելով) Խորհման էն վտանգաւոր բանն ալ կը խօսի հոս, բայց փոքր ՚ի շատէ հեռատեսութիւն ունի իրաց պարագաները կշռելու, եւ հիմայ չկրնար ամեն բան ըսել : Ես պատրաստ եմ ժողովոյն յայտնել ինչ որ կուզէ խօսնալ, բայց երբ անանձին մնայ, երբ ժողովուրդը դուրս ելնէ :

ՔԱՐԱԿԷՕՋԵԱՆ Գ. ԷՖ. Շատ աղէկ, ժողովը այսօր ալ կրնայ զանիակ նիստ ընել, թող ժողովուրդը դուրս ելնէ :

Ժողովոյ մէջ աղմուկ կը տիրէ եւ ունկընդիր ժողովուրդը դուրս ելնել կակոխ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ժողովուրդը դուրս հանող երեսփոխանը թող գայ ատենապետի պաշտ

տօնը կատարէ, ժողովը զանիակ նիստ ընել չորոչեց, եւ երբ որոշէ, Ատենապետին անկէ գործադրել եւ ոչ ուրիշի. այդ զանիակ նիստը եթէ որոշուի այսօր չը կրնար ըլլալ :

Ատենապետ էՖ. աղմուկը կը հանդարտեցնէ եւ ունկընդիր ժողովուրդը իւր տեղը կըսկըսի վերադառնալ :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. Քանի ամիսէ ՚ի վեր կապակցուած այդ հարցման պատասխանին, եթէ Նախագահ Սրբազանը զանիակ նիստ կուզեր, ինչու առաջ չյայտնեց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Հարցում ընող երեսփոխաններն եթէ այսօր անպատճառ տեղեկութիւն կուզեն ստանալ, կառաջարկեմ որ Նախագահ Սրբազանին դիմեն առանձին եւ տեղեկանան խնդրոյն :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Սահմանադրական Սրբազան Պատրիարքը որ եւ է ստիպողական պարագայի մէջ կրնայ կարեւոր խնդրոյ մը վրայ առանձին տնօրէնութիւն մ'ընել, բայց պարտաւոր է ֆաղ. ժողովոյ յաջորդ նիստին ներկայացնել զան, եւ ընդունել տալ : Սակայն ֆաղ. ժողովոյ հրաժարելէն ետեւ այդ խնդիրը պատահեր եւ յաջորդին ընտրութեան խնդիրն ալ ընդհ. ժողովոյ մէջ վիճարանութեան ներքեւ իյնալով ամիսներ անցեր են, բայց դարձեալ Սրբազան Պատրիարքը ֆաղ. ժողովոյ ընտրութեանէն ետեւ կրնար խնդիրը հագորդել անոր : Հիմա պէտք է որ ֆաղ. ժողովին յայտնէ այս խնդիրն, ուրիշ անգամ այս մասին աւելի զգուշութիւն քանցնելով :

ՆԱԽԱԳԱՀ Ս. Շատ լաւ, բայց պէտք է դիտարար որ ֆաղ ժողովոյ հրաժարականէն ետքը ուրիշ ստիպողական խնդիրներ ալ տնօրէններ եմ, անոնց վրայ ալ պէտք է տեղեկութիւն առնուք . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. Նախորդ ֆաղ. ժողովոյ ատենագրութիւնները ծայրէ ՚ի ծայր աչքէ անցնելով դատեմ եմ միայն թէ ֆաղ. ժողովը Բ. Կրան յայտներ է որ այս խնդրոյն համար ինք սխալ միջնորդութիւն մը կրնայ ընել երուսաղէմայ Պատրիարքին, որով իրաւասութեանը կը պատկանի անոր լուծման եղանակը :

ՊԵՆԵԱՆ Ք. ԷՖ. Այլտեսան էՖէնտին

Սրբազան Պատրիարքին Սահմանադրական մէկ արտօնութիւնը յիշեց, զոր ամենքս ալ կը ճանչեմք եւ կընդունիմք, միայն թէ Նորին Սրբազնութիւնը պարտաւոր էր այս արտօնութեան յարակից պայմանն ալ գործադրել, եւ թէ Լատինաց պատարագելու խնդրոյն նկատմամբ ըրած տնօրէնութիւնը եւ թէ ուրիշ այն ամեն խնդիրները՝ զորս, ինչպէս յայտնեց տնօրէններ է ինքնին, Ազգ. վարչութեան ներկայացնել, անոր կազմութեանէն ետեւ ինչպէս Սահմանադրութիւնը կը գրամադրէ : Արդ՝ քանի որ օրինաց այս արամադրութիւնն ՚ի գործ դրած չէ կառաջարկեմ որ Սրբազան Պատրիարքը ֆաղ. ժողովոյ հրաժարականէն ետեւ իր կատարած գործողութեանց համարը ներկայացընէ Ազգ. վարչութեան :

Տ. ԽՈՐԷՆ Վ. (Պատրիարքական փոխանորդ Ս. Երուսաղէմայ) Երբ փոխանորդ Սրբազան Պատրիարքին Երուսաղէմայ, կը յայտարարեմ ահաւասիկ որ Լատինաց պատարագելու թոյլտուութեան խնդրոյն համար սնուցիւ հեռուցիք քաշուած է Սրբազան Հօր կողմէ այն միջոցին՝ որ ֆաղ. ժողովը հրաժարած էր, սակայն Սրբազան Պատրիարքը միեւնոյն օրը անմիջապէս յորում հիւանդ էի եւ Տօքթէօր Իւթիւճեան քօլս կը գտնուէր նոյն պահուն իմացուց ինձ հեռադրին նպատակը : Ասոր վրայ ես ալ անմիջապէս հեռադր քաշեցի ՚ի Ս. Երուսաղէմ սա մտօք թէ որքան որ Սրբազան Պատրիարքը Լատինաց խնդրոյն նկատմամբ հեռադր մը քաշած է, կը յուսամ որ վանքին իրաւունքները պահպանելու մասին պարտու պատշաճն ՚ի գործ զնելու չէք վարանիր :

Այս բան միայն բացատրութիւն տալէ ետեւ կաղաչեմ որ խնդիրը գոցուի վերջանայ : Չայնր. — Այս խօսքերն ըսել տալու չէիք :

Ժողովոյ մէջ մեծ աղմուկ մը կսկսի, բողբոջներ տեղէ կուենան, եւ ատեանին բարեկարգութիւնը կը վրդովի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Հանդարտեցնելով ժողովը) Երեսփոխան էՖէնտիններ քիչ մ'ալ Ձեր Ատենապետը մօտիկ ըրէք :

Իսկ Խորէն Հայր սուրբ, իրաւունք չունիք բնաւ հոս իրբ Երուսաղէմայ Պատրիարքին քանակութեամբ քայլ, եւայն յայն

արքական փոխանորդ բացատրութիւններ տալու այնպիսի խնդրոյ վրայ, զոր Նախագահ Սրբազանը գաղանի պահել ուզելով զլացաւ զանիակ նիստ չեղած՝ բացատրութիւն տալու եւ ժողովն ալ չպահանջեց այդ բացատրութիւնը : Մենք չեմք ուզեր հիմա գիտնալ թէ այդ տեսակ հեռադր մը քաշուած է թէ ոչ, եւ աւելորդ է այս մասին խօսքն աւելի երկարել :

Սրբազան Հայր, որքան ալ մեծ լինի մեր ամենուս յարգանքը ձեր անձին եւ ձեր պատօնին վրայ, զոր իբր Հայր հասարակաց կը վարէք, այսու ամենայնիւ ընդհ. ժողովը չը կըրնար ընդունիլ որ իրմէ վեր իրաւունք մը գտնուի վարչութեան մէջ : Երեսփոխանական ժողովն իրաւունք ունի գործադիր պաշտօնութեան այս կամ ինչորոյն վրայ հարցում ուղղելու եւ բացատրութիւն ստանալու : Իսկ Սահմանադրութեան մէջ ուրիշ արամադրութիւն մ'ալ կայ որ ընդհանուր կերպով իրաւունք չը տար Պատրիարքին ինքնին գործելու եւ երբ ըստիպողական պարագայի համար առանձին տնօրէնութիւն ընելու իրաւունքը կուտայ յաջորդ նիստին մէջ ֆաղ. ժողովոյ ներկայացնելու պայմանաւ կուտայ զայն : Արդ քանի որ ֆաղ. ժողովոյ հրաժարականէն ետեւ այդ հեռադրին տնօրէնութիւնը տեղի ունեցեր է, պէտք է որ արդի ֆաղ. ժողովոյ յառաջիկայ նիստին ներկայացնէք զան, եւ այն ատեն հարկ չմնար ընդհ. ժողովոյ զանիակ նիստ կազմելու :

ՆԱԽԱԳԱՀ Ս. Ատենապետ էՖ. Ազգային Սահմանադրութեան վրայ բացատրութիւններ տուիք, եթէ ոչ ձեզի չտի գէթ ըստ բաւականին ես ալ կը հասկնամ Սահմանադրութեան արամադրութիւններն եւ ոգին : Բայց ես Պատրիարքական աթոռը կըստ օրէս յայտարարեցի արդէն թէ ՚ի հարկին չըջանակէն պիտի խոտորիմ եւ այս պայմանաւ ընդունելու եմ Պատրիարքութեան պաշտօնը . . .

ՔԱՐԱԿԷՕՋԵԱՆ Գ. ԷՖ. Չեմք ընդունիր, կը բողբոջեմք : Չայնր. — ո՛չ, ո՛չ, այդ տեսակ պայման չեմք ընդունիր, ես առէք ձեր խօսքը :

ՆԱԽԱԳԱՀ Ս. Խօսքս ես չեմ առնուր, թողէք որ չարունակեմ :

Երեսփոխաններէն ոմանք աղաղակ կը բառնան եւ ժողովոյ բարեկարգութիւնը կը վրդովեն, ընդհանուր չփոթութիւն մը կսկսի ժողովոյ մէջ, եւ Ատենայեալ էֆէնտին ժողովոյն բարեկարգութիւնը պահելու հրաւէր կարգալով կապառնայ ստանանք գոցել, եթէ ազմուկը վերջ չգտնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Երեսփոխան էֆէնտիններ, ներկեցէք որ քիչ մ'ալ ձեզի յիշեցնեմ այն յարգանքը՝ զոր Ձեր ներսէն կղզաք, զիտեմ, առ զուխն ազգին եւ զոր պէտք է քիչ մ'ալ գործքով ցցնէք: Ես Ձեր կողմէն խօսեցայ քիչ մ'առաջ՝ Նախագահ Սրբազանին հետ, որու նորին Սրբազանութիւնը պատասխան պիտի տար. կրնայի նորէն ձեր կողմէն պատասխանել, ինչո՞ւ դուք կրնդ միջէք զինքը եւ ազմուկ կը յարուցանէք:

(Վերստին շշուկ)

ՆԵՐՍԷՍԵԱՆ Գ. ԷՖ. Թող չեն տար որ Հայոց Պատրիարքը խօսի:

ՆԱԽԱԳԱՀ Ս. (Շարունակելով) Պատրիարքի պաշտօնը Յամանեան կառավարութեան մէջ կշռեր եւ տեսնել եմ որ գործելու համար Ազգ. Սամահաղրութեան գծած շրջանակը նեղ կուգայ, ուստի ինչպէս առջի օրէն ալ յայտարարած եմ, այս հաստատուն սկզբունքը դրած եմ, թէ իհարկին պէտք է շրջանակէն դուրս ելնեմ, երբ ժողովը վստահութիւն ունի:

(Գժգոնութեան ձայներ)

Ձեր իրաւունքն է այս սկզբունքը չընդունիլ, բայց ես թերեւս ձեզմէ աւելի սահմանադրասէր եմ, եւ ձեր ըրածը զիս խճճել է միայն: Հիմա ես մէկ խօսքով խնդիրը կը վերջացնեմ: Այն օրը որ Սահմանադրութեան վերաբնութիւնը կատարելով շրջանակը լայնցընէք, Հայոց Պատրիարք եմ ես, բայց հիմա ոչ:

Եւ Նախագահ Սրբազանն այս յայտարարութիւնն ընելով իջաւ իւր աթոռէն եւ տրամադրուեցաւ ժողովէն մեկնելու: Ժողովն սկըսաւ յուզուիլ եւ մեծ ազմուկ տիրեց, Ատենայեալ էֆէնտին բարեկարգութիւնը վերահաստատեց, Նախագահ Սրբազանը իւր աթոռը վերադարձաւ եւ յուզումը վերջացաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Այս բոլոր յուզումները, այնպէս կը տեսնես իմ, որ սխալ հասկացողութեան մը արդիւնքն է, կըսէք Ս. Հայր թէ օրինաց շրջանակէն դուրս ելնելու յայտարարութիւնը բաց էր: Ես ներկայ էի երբ Մայր Եկեղեցւոյ մէջ ուխտեցիք Սահմանադրութեան վրայ, ներկայ գտնուեցայ ձեր քարոզին ալ, եթէ յայտարարութիւնը բաց էր ըլլայիք որ Սահմանադրութեան շրջանակէն դուրս պիտի ելնէք, նախ եւ առաջ ես կը բողոքէի, բայց այդպիսի խօսք չըրիք: Ձեր ըսածն այն էր որ Սահմանադրութեան գրին չը կապովք եւ ուխտեցիք Սահմանադրութեան ոգւոյն ու սկզբունքներուն վրայ: Սահմանադրութեան գիրը միշտ գործադրելն անկարելի եղած է եւ ինչ ինչ կէտեր վերաբնութիւնն են, բայց սկզբունքներն անփոփոխ մնացած են: Պատրիարքին անկախօրէն չգործելն ալ նոյն խախտելն էր: Գրին է, հետեւաբար Ձեր Սրբազանութիւնը ոչ թէ ըստ գրոյն, այլ ըստ ոգւոյն Սահմանադրութեան պարտաւոր է մեկնել Ազգ. Վարչութեան թէ՛ այն հեռագիրը քաշուած է թէ ոչ, եւ թէ ինչ պատճառներով, սաի ձեր պարտաւորութիւնն է ըստ Սահմանադրութեան, եւ չէք կրնար չկատարել զայն:

Ձեր անկեղծութիւնը, Սրբազան Հայր, ծանօթ է ամենուս. ձեր բերնէն ելած խօսքը ինչ ալ ըլլայ, ձեր հոգին եւ ձեր սիրտը զիտեմք որ ուղիղ է. մէկ բան մը միայն կը մնայ ընել, այն է յառաջիկայ նիստին Խառն ժողովին բացատրել իրողութիւնը՝ եւ խնդիրը կը վերջանայ:

ՆԱԽԱԳԱՀ Ս. Ես այդ բացատրութիւնը տալու պատրաստ եմ եւ պիտի տամ, բայց ըսի նաեւ թէ կաշկանդուած եմ: Սրտին անձկութիւնը զիս կսախտէ խնդրել որ Սահմանադրութեան վերաբնութիւնը փութացնէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. Խօսք կուղեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Այս խնդիրը վերջացած է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Ատենադպիր Քաղ, ժողովոյ) Ուրիշ պարագայ մը կայ, որու վրայ պիտի խօսիմ: Ազգ. Վարչութեան Խառն ժողովը իւր Գ. Բ. Բ. կամ Գ. Բ. Բ. նիստին մէջ, չեմ յիշեր ճշգիւ, որոշած է Սահմանադրութեան այն մասերը՝ որոնք վերաբնութեան են եւ փոփոխութիւն կրած, եղած փոփոխութեանց հա-

մաձայն, եւ այն մասերը՝ որոնք անփոփոխ կը մնան, նոյնութեամբ գործադրել անթերի, ինչպէս որ նաեւ յատենի Ընդհ. ժողովոյ յայտարարած եմ արդէն յանուն Ազգ. Վարչութեան: Այս մեր օրինական ընթացքին մէջ չեմք ընդունիր որ Սրբազան Պատրիարք Հայրն նեղած լինիմք:

Ձայն մը. — Շատ աղէկ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Երեսփոխան էֆէնտիններ, ատենը չպիտի վերջացնեմ առանց ամենակարեւոր խնդրոյ մը վրայ ձեր ուշադրութիւնը նորէն հրաւիրելու: Գիտէք որ Սահմանադրութեան վերաբնութեան խնդրոյն համար այս ժողովը բացված է եւ ահա Գ. Բ. Բ. նիստը հասանք ու դեռ մեր բուն պաշտօնին չձեռնարկեցինք. դրեթէ Սահմանադրութեան վերաբնութիւնը թէ հարկաւոր լինի, թէ ոչ, այս երկարաձգութիւնը անպատեհ է եւ ամօթ մեզ ամենուս: Այս մասին տասն եւ եօթն երեսփոխանք առաջարկութիւն մը ըրած են ուրիշ նիստի մը մէջ, զոր պիտի կարգամ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. Պահ մ'առաջ ժողովոյ մէջ տեղի ունեցած ցաւալի դէպքին նըկատմամբ խօսք ունիմ:

(Շշուկ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Այս խնդիրը գոցուած է, խօսք չունիք:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. Ժողովը խնդիրը չը գոցեց, ինչո՞ւ Գիւանը մեր իրաւունքը կը բռնաբարէ, կը բողոքեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Աւելի դո՛ւ կը լինիմ որ ինձի դէմ բողոքէք, քան թէ իրարու դէմ. ես ալ ձեր իրարու հետ կռիւ ընելու դրութեան դէմ կը բողոքեմ:


(Միծաղք)

Ատենայեալ էֆն. Սահմանադրութեան վերաբնութեան մասին 17 երեսփոխանաց կողմէ եղած առաջարկութիւնը կընթեռնու:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. Խօսք ուզեցի մինչեւ իսկ այդ առջարկութեան ընթերցումը յաջորդ նիստին թողել տալու նպատակաւ, վասն զի օրը տարածամած ըլլալուն այդ խընդիրը չկրնար բացուիլ հիմայ եւ ես յաջորդ նիստին պիտի խօսիմ:

Ժողովը կորոչէ յաջորդ նիստը երեք շաբաթ ետքը գումարել, ատենադրութիւնները հասցնելու համար՝ եթէ հարկ լինի, տակաւին շաբաթ մ'ալ նիստը յետաձգելու պայմանաւ, եւ Ատենայը կը վերջանայ ժամը 10 1/2 լն:

Ըրէնադպիր Ըրէնադպիր ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Գ. Ս. ՕՏԵԱՆ




Handwritten text at the top of the left page, including the number 123456789.

Handwritten text in the middle section of the left page.

Handwritten text in the lower middle section of the left page.

Handwritten text in the lower section of the left page.

Handwritten text at the bottom of the left page.




Handwritten text at the top of the right page.

Handwritten text in the middle section of the right page.

Handwritten text in the lower middle section of the right page.

Handwritten text in the lower section of the right page.

Handwritten text at the bottom of the right page.



Handwritten text in the center of the right page.

Handwritten text below the center of the right page.

Handwritten text at the bottom of the right page.

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԵՎԵՆՈՒԹԻՒՆ ԸԶԳԵՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Ղիւանատան Պատրիարքարանի, եւ կը գանտի  
Նկեղեցեաց բանկալները: